ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2025 թվականի թիվ 149 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-26-Ը ՏԵՂԱՑԱԾ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 1043-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՂԵՏԻՑ ՏՈՒԺԱԾ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՀԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Դիլիջան համայնքի արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի թիվ 365 արձանագրությունը, արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի՝ 2025 թվականի հուլիսի 2–ին կայացած նիստի թիվ 16 արձանագրությունը.

որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում

ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-ն որոշման համաձայն սույն որոշման հավելվածում ընդգրկված Դիլիջան քաղաքի բնակիչ՝ Շահեն Սանթրոսայնին աղետի հետևանքով անհատական բնակելի տանը պատճառված վնասի փոխհատուցման նպատակով տրամադրել 2400,0 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ հազար ՀՀ դրամ՝ ըստ փոխհատուցման ուղղության:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հուլիսի 9-ի թիվ 186-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-ն որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման» կարգի 5–րդ և 6-րդ գլուխների պահանջների կատարումը:

3. Հանձնաժողովի նախագահին՝ յուրաքանչյուր ամսվա առաջին տասնօրյակում ինձ ներկայացնել տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-07-04 16:29:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. հուլիսի 03
ք. Իջևան